

Լեւոնի արձանին վրայ եւ մեր գունաւոր պատկերին մէջ որոշ կերպով կը տեսնուի, որ արքայական մականին վերի մասը կտորած անհետացած է : Ականատես հեղինակներու նկարագրածին նայելով՝ մականին կտորած մասը կը վերջնաւոր շուշանի ծաղիկով մը : Չեմ կարծեր որ կրկին փոխադրութիւններու ժամանակ կտորած ըլլայ այն . վասն զի տաշանաքարին առաջին փոխադրութեանէն յիշ առաջ՝ 1790-ին՝ հրատարակուած գրքի մը մէջ կըսուի, որ Լեւոն « աջ ձեռքը կը բռնէր այժմ կոտորած մական մը » (1) :

Չարմանալի զուգահիւսութիւն մըն է, որ Լեւոնի շիրքին իր կեանքին նման թափառական եղած է . իսկ մարմինը՝ մեռնելէ ետքն ալ աստանդակահան, առանց կայուն տեղ մը ունենալու, առանց հանդստարանի՝ եւ գրեթէ կորած . . .



ԻԱ

Ո՛ր են ոսկրներ

Գառ տարիներէ ի վեր խափանուած քարահանք մը կը գտնուի Պարիսի հարաւային ծայրը, Մոնրուժ թաղին մէջ, որուն ընդարձակութեան մասին գաղափար մը տալու համար ըսեմ, որ երբեմն կը տարածուէր մինչեւ Սէն գետ, գրաւելով ձախակողմեան ափի բոլոր թաղերը . բայց հիմա՝ փլուզումներէ յառաջ եկած աղէտներու առջեւն առնելու համար մեծագոյն մասը փակուած է կառավարութեան կողմէ, եւ կը մնայ 11,000 քառակուսի մետր տարածութիւն մը, 780 մետր երկայնութեան վրայ : Խորութիւնն է՝ գետնի երեսէն 19 մետր ցած . 90 աստիճաններով սանդուխ մը շինուած է հոն իջնելու համար :

Այս քարահանքն այժմ կը կոչուի՝ Les Catacombes, այսինքն՝ Գետնադամբանք, որուն զխաւոր մուտքն է՝ Դանֆէր-Բոչըրո հրապարակին վրայ, թիւ 2, իսկ ելքը՝ Դարո փողոցին մէջ : Այսպէս կոչուելուն պատ-

(1) L. Millin, *Antiquités nationales* ԵԱՍ., հս. Ա, եր. 125 :